# Ե

## ԵԿԵՂԵՑԻՔ ՀԱՅՈՑ

Կրկին են եկեղեցիք Հայոց 'ի Կամենից, մին փառաւոր և հոյակապ 'ի պատիւ Վերափոխման Աստուածամօր, ուր դրուած կը պաշտի Հրաշագործ պատկերն. երկրորդն Ս. Նիկողայոս անշուք մատուռ, որ այժմ Ռուսաց ձեռքն է։

Առաջինը՝ հին ատեն նուիրեալ է յանուն Աքանչելագործ հայրապետին, և երկրորդն 'ի պատիւ Աւետման Ս. Կուսին. Ահաւասիկ ինչ կը գրէ այս երկրորդիս մասին հնագէտն Ռոլլէ[1]. «Երեքտասներորդ դարու շինուած, որով յառաջ քան զոիրել քաղաքիս (Կամենիցի) Կորիաթովիչ նախարարաց, որք էին սերունդ Լիթվայի կոմսին. ուշադրութեան արժանի է վաղեմի սրբավայրս, որ շատ ու շատ յեղափոխութեանց ենթակայ եղած է։ Այդ է, 'ի Հայոց յանուն Աւետման կուսին կանգնեալ եկեղեցին, որ այժմ կը կրէ զանուն Ս. Նիկողայոսի։ Կը պակասին մեզ գրաւոր յիշատակարանք, որով չեմք կարող դրականապէս հաստատել անոր ԺԳ դարու լինելը. այլ Հայոց գաղթականութեան միջոցը 'ի Փոտոլիա, և նոյն իսկ

1. Հեղինակս գրուածոց մէջ Անտոնի անունը կը գործածէ, որ է հմուտ հնագէտ Փոտոլիոյ գաւառին. գրած է Յէւլո-տոլխոբոնէ Փոտոլէոյ և Վոլըտոլէօ վերնագրով հատորներ. գործեալ Գորոնովիչ Ռուս երեցը գրած է Փոտոլիոյ Հայոց վրայ։